ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
VARUZHAN HARUTYUNYAN

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Համընդհանրացման բազմաբևեռ գործընթացներով պայմանավորված անվտանգագիտության երիտասարդ գիտաճյուղը հարահոս արդիականանում է՝ կանխատեսելով բոլոր այն փոփոխությունները, որոնք կարող են սպառնալ հանրային անվտանգության ապահովման նոր օրակարգին: Այդուհանդերձ փաստենք, որ այս նորաստեղծ գիտաճյուղի շրջանակներում նոր աշխարհակարգի և տեսաբանները, և փորձագետները դեռևս միասնական մոտեցում չեն մշակել՝ ելնելով բազմաբևեռ աշխարհի տարածաշրջանային զարգացումների առանձնահատկություններից: Գիտության այս երիտասարդ ոլորտը(security studies)գտնվում է զարգացման գործընթացում՝ ներառելով անվտանգության քաղաքականության արդիականացման պատմական առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

«Սառը» պատերազմի տարիներին հանրային անվտանգության ապահովումը, կապիտալիստական և սոցիալիստական համաշխարհային համակարգերի հակամարտության պայմաններում, բացառապես ուներ ռազմաքաղաքական բնույթ: 20-րդ դարի 80-ական թթ.վերջերին, երբ արդեն ընդունված էր «էյնշտեյն-Ռասել-Կյուրի» մանիֆեստը[1], իր ակտիվ գործունեությունն էր ծավալել Հռոմեական ակումբը[2], կնքվել էին Հելսինկիի պայմանագրերը[3], ակնհայտ էր որ անվտանգության նախկին հայեցակարգը սպառել է իրեն: Նոր հայեցակարգի մշակման հրամայականը ակնհայտ դարձավ 80-ականներին ԽՍՀՄ-ում սկսած «պերեստրոյկայի» քաղաքականությամբ: Արդյունքում հանրային անվտանգության ապահովման ռազմաքաղաքական մոդելը կոշտ քննադատության ենթարկվեց՝ մշակված նոր տեսության շրջանակներում: Համակարգելով անցյալի փորձը անվտանգագետները համադրեցին իրենց իսկ կողմից առա-

[1] http://www.kcherepanov.narod.ru/MRassEin.htm
[2] http://www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/sociologiya/RIMSKI_KLUB.html
[3] dic.academic.ru/dic.nsf/es/84526/ОРГАНИЗАЦИЯ

ջադրված անվտանգության «նեղ(կոշտ՝ պետականակենտրոն)» և «լայն (փափուկ՝ քաղաքացիակենտրոն)» հայեցակարգերը:

Այս նկատառումներով էլ հանրային անվտանգությունը մեկնաբանվեց որպես «վնասից կամ վտանգից պաշտպանվածության զգացողություն»[4]: Համաձայն ամերիկացի քաղաքագետ Ա. Ուոլֆերսի առաջարկած մեկ այլ մոտեցման՝ «անվտանգությունը օբյեկտիվ տեսանկյունից սպառնալիքների բացակայություն է ձեռք բերված արժեքների նկատմամբ, իսկ սուբյեկտիվ տեսանկյունից՝ վախի բացակայություն, որ այդ արժեքները կարող են վնասվել»[5]: Ելակետային այս երկու մոտեցումներից ակնհայտ է, որ արդի գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված անվտանգությունը բարդ և բազմաչափ երևույթ է: Այս նկատառումներով էլ անվտանգագետները մշակեցին բազմաշերտ ապարատ, որն իր մեջ ներառեց՝ վնաս, վտանգ, սպառնալիք, ռիսկ, խոցելիություն հասկացությունները:

Վնասը համակարգի հատկությունների և/կամ գոյության պայմանների այնպիսի փոփոխություն է, որի հետևանքով փոփոխվում են այդ համակարգի կարևորագույն բնութագրերը, ինչը հանգեցնում է նրա կայունության կամ հաստատունության նվազմանը,

Վտանգը վիճակ է, որի դեպքում կա համակարգին վնաս պատճառելու հավանականություն,

Սպառնալիքը ռեալ կամ հնարավոր երևույթ է, գործընթաց, որը կարող է վնաս պատճառել պետության, հասարակության կամ անձի շահերին: Բնութագրվում է և մտադրության, և հնարավորության առկայությամբ: Ըստ իր աղբյուրի կարող է լինել արտաքին և ներքին, ըստ ներազդման ոլորտի համաչափ և անհամաչափ:

Ռիսկը որոշակի ծանրությամբ ու բովանդակությամբ վնաս կրելու հնարավոր վտանգի հատկանիշ է, անվտանգության ապահովմանն ուղղված գործունեության փաստացի արդյունքների շեղում անվտանգության նախատեսված չափանիշներից[6],

---

[4] Terri Terriff, Stuart Croft, Lucy James, Patrick M. Morgan, *Security Studies Today*.Polity Press, 1999, p. 2.

[5] Манилов В.Л. Безопасность в эпоху партнерства. М.: ТЕРРА, 1999. – 368 с., С.12

[6] Քոթանջյան Հայկ Ս. Հայաստանի ազգային անվտանգության զարգացման մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում.- Եր.: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային զարգացման հետազոտությունների ինստիտուտ, 2008.էջ 189-190.

Խոցելիությունը սոցիալ-քաղաքական համակարգի անվտանգության ապահովման չափման միավոր է, որը ներքին և արտաքին սպառնալիքների դեմ նրա պոտենցիալ անպաշտպանվածության վկայությունն է[7]:

Ակնհայտ է, որ հանրային անվտանգություն հասկացության նման բազմաշերտության պարագայում, այնուհանդերձ գերակա է անվտանգության օբյեկտի վերաբերյալ հարցերը, այսինքն՝ այն, թե ինչը պետք է պաշտպանված և սպառնալիքներից ձերբազատված լինի և ովքեր պետք է դրանք պաշտպանեն: Նմանօրինակ հարցադրումը պատմական հոլովույթում տարբեր կերպ է մեկնաբանվել՝ պայմանավորված անվտանգության հայեցակարգի արժեքաբանության փոփոխությամբ և օբյեկտի դեմ ուղղված սպառնալիքների ցանցային բնույթով: Այս նկատառումներով անհրաժեշտ ենք համարում համակարգված ներկայացնել հանրային անվտանգության հայեցակարգի կառուցվածքը: Հանրագումարելով գիտական գրականության մեջ առկա մոտեցումները՝ նշենք, որ քննարկվող հարցի վերաբերյալ կան տարաբնույթ մոտեցումներ: մի դեպքում որպես անվտանգության օբյեկտ դիտարկվում է միայնպետությունը, այլ դեպքում հասարակությունը, մարդը: Արդի հասարակության ցանցային կառավարման պայմաններում նպատակահարմար ենք գտնում այդ երեք օբյեկտների շահերը և գործառույթները դիտարկել համադրության մեջ: Մեր կարծիքով նման մոտեցումը հնարավորություն է տալիս համալիր ամբողջության մեջ բացահայտել այն գործոնները, որոնցով որոշվում է օբյեկտի անվտանգության սպառնալիքը և նրա կանխման մեխանիզմները: Գիտական գրականության մեջ նմանօրինակ հարցադրումները տարաբնույթ մեկնությունների են ենթարկվում՝ ելնելով տվյալ օբյեկտի դեմ ուղղված ներդաշնակ և աններդաշնակ սպառնալիքների կանխատեսումների բնույթից: Վերջինովս էլ պայմանավորված է անվտանգության հայեցակարգի գործառման համար որոշիչ հետևյալ հարցադրումը՝ ով և ինչ պետք է պաշտպանվի: Արդի ցանցային կառավարման առանձնահատկություններով է պայմանավորված, թե ինչպես են բնորոշվում օբյեկտը և սպառնալիքները՝ որոշելով անվտանգության հայեցակարգի արժեքային համակարգը:

Անվտանգության պետականակենտրոն հայեցակարգ

«Սառը» պատերազմի տարիներից անվտանգությունը ուսումնասիրվում էր ռեալիզմի/նեոռեալիզմի հայեցակարգի արժեքային տիրույթներում՝ հիմքում ունենալով անվտանգության ապահովման պետականակենտրոնության

---

[7] NicoStehr. "The Fragility of Modern Societies.Knowledge and Risks in the Information Age".London - Thousand Oaks - New Delhi: SAGE Publications, 2001. Pp. 144-146.

սկզբունքը: Այս հայեցակարգի կոմպակիցները պետությունը դիտարկում են որպես միջազգային համակարգի հիմնական դերակատար: Որպես այդպիսին գործառնելով միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների շրջանակներում նրա իրականացրած իշխանությունը ներառում է kratos և arche արժեքաբանությունը: Եթե kratos ասելով հին հույնը հասկանում էր հարկադրական իշխանություն, ապա arche բարդ, բազմաչափ գործողություններ ներառող բայ է: Նրանցից յուրաքանչյուրը իշխանության որոշակի տեսակի դրսևորման ձև է՝ պայմանավորված պետության ինստիտուտի զարգացմամբ և և պետականաշինության մշակույթի ադիականացմամբ. Սակայն մեր կարծիքով նոր աշխարհակարգի կայացման գործընթացում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «անարխիա»[8] հասկացությունը: Տվյալ պարագայում այն դիտարկվում է ոչ թե որպես քաոս, այլ որպես միասնական վերպետական իշխանության տարերային դրսևորման մի այնպիսի ձև, որը պետական կառավարմանը հաղորդում է իրավիճակային բնույթ: Հիրավի միջազգային համակարգի անարխիկ բնույթը պետության վարքագիծը պայմանավորող գլխավոր գործոններից է: Վերպետական իշխանության տեսքով պետությունների միջև բախումնային շահերի լուծման արդյունավետ մեխանիզմի բացակայության պատճառով պետությունները կարող են դիմել զինված ուժերի օգտագործմանը իրենց շահերի պաշտպանության և նպատակներին հասնելու համար: Նմանատիպ իրադրություններում միշտ գոյություն ունի ռազմական բախման վտանգ, և յուրաքանչյուր պետություն պետք է կարողանա և պատրաստ լինի ապահովել սեփական անվտանգությունն իր ուժերով: Սա հանգեցնում է այն բանին, որ պետության հնարավորությունները, հատկապես ռազմական ոլորտում, կարևոր նշանակություն ունեն պետության գոյատևման համար և որոշում են կոնֆլիկտի ելքը միջազգային համակարգի անարխիկ բնույթի պայմաններում: Պետության ուժը (power)գերիշխող է միջպետական բոլոր հարաբերություններում, այդ

---

[8] անարխիա - (anarchy, հուն.Anarchia բառից) – 1) անիշխանություն, 2) անկարգություն, տարերայնություն, անկազմակերպվածություն,
մոնարխիա(միապետություն) - (monarchy, հուն. Monarchia բառից) - պետություն, որի գլուխ է համարվում միապետը(մոնարխը),
օլիգարխիա (oligarchy, հուն. Oligarchia բառից – քչերի իշխանություն) – ռեժիմ, որի պայմաններում իշխանությունը պատկանում է քիչթվով մարդկանց(հարուստներին, զինվորականներին և այլն),
դիարխիա (dual power, diarchy, հուն. dis - երկակի և arche – իշխանություն, գերիշխանություն բառերից) - երկիշխանություն: (ХалиповВ.Ф. Власть: Кратологический словарь.-М.: Республика, 1997.- 431с.)

պատճառով ռազմական անվտանգության ապահովումը յուրաքանչյուր պետության ամենագլխավոր խնդիրն է՝ անկախ քաղաքական ժամանակի և կուրսի փոփոխության: Քաղաքագետ Գ. Ալմոնդը անարխիան դիտարկում է ազատականության հետ հարաբերությունների տիրույթներում՝ քննարկելով կառավարության գործունեության արդյունավետությունը: Այս տիրույթներում քաղաքագետը շեշտված կրևորում է անարխիզմի հիմնադիր ռուս իշխան Պ.Ա. Կրոպոտկինի այն տեսակետը, որ ինչպես կենդանիների, այնպես էլ մարդկանց համար կյանքի նորմ է համագործակցությունը և ոչ թե մրցակցությունը: Համագործակցության հիմքի վրա կառուցված հասարակությունում կառավարությանը փոխարինելու են գալիս կամավորների այնպիսի խմբեր որոնք տիրապետում են կառավարման արվեստին և ընդունակ են իրենց գործունեության հիմքում դնել «հանրային շահը համընդհանուրի բարիքն է» սկզբունքը: Տնտեսությունը պայմանավորված է այն պահանջմունքներով, որը քաղաքացիների կենսաձևում մեծացնում է ազատ ժամանակը և ստեղծագործական գործունեությունը[9]:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ ռեալիզմի և նեոռեալիզմի հիմնական տարբերությունը հանրային անվտանգության ապահովման տիրույթներում անարխիայի և ազատականության փոխհարաբերությունների բնույթի մեջ է: Եթե ռեալիստները պետության վարքը բացատրում են իշխանության ձգտող

---

[9] Անարխիզմի հետևորդները, չնայած համաձայնվում են, որ կառավարության գործողությունները հանգեցնում է անցանկալի հետևանքների, այդուամենայնիվ, այլ կերպ են մեկնաբանում ինչպես հասարակությունը, այնպես էլ կառավարությունների կողմից պատճառված վնասները: Անարխիստները կոմունիտարիաներ են: Նրանց համար հասարակությունը անհատների ամբողջություն չէ, այլ մարդկանց միավորում, որոնք իրենց բնական վիճակում հավասար են: Կառավարությունը և իշխանությունը կործանում են այսպիսի միավորումները և հանգեցնում են ճնշման և օտարման. Անարխիստները կառավարության այլընտրանքը տեսնում են ինքնակամ համագործակցության և բնական միավորումների (հանրույթների) մեջ: Ըստ նրանց կառավարությունը ենթադրում է իշխանություն և անհավասարություն մարդկանց միջև: Բայց իշխանությունը այլասերում է: Ինչպեսիր ժամանակներում ասում էր լորդ էկտոնը «իշխանությունը այլասերում է, իսկ բացարձակ իշխանությունը այլասերում է բացարձակ»: Եվ եթե իշխանության կրողները այլասերվում են, ապա նրանք, ովքեր դա չունեն ղեգրադացվում և օտարվում են միմյանցից: Ըստ Ժ.-Ժ. Ռուսսոյի միայն կառավարության միջոցով չմիավորված մարդկանց միջև կարող են առաջանալ կապեր, որոնք թույլ են տալիս նրանց ամբողջովին բացահայտել իրենց մարդկային պոտենցիալը: Ինչքան ուժեղ է կառավարությունը, այնքան շատ է իշխանության անհավասարությունը, որը հանգեցնում է ողբերգական հետևանքների: (Алмонд Г., ПауэллДж., СтромК., Далтон Р. Сравнительнаяполитологиясегодня: Мировойоброз: Учебноепособие / Сокр. пер. с англ. А.С. Богдановского, Л.А. Галкиной; Подред. М.В. Ильина, А.Ю. Мельвиля.- М.:АспектПресс, 2002.- 537с. С. 29-31.)

կամ «իշխանության ծարավ» մարդկային էությամբ, ապա նեոռեալիզմը պետությունը դիտարկում է որպես համակարգ: Վերջինս, հիմնվելով իշխանության տարաբաժանման վրա, կառավարում է իրականացնում այլ միավորների (պետությունների) միջև ուժերի հարաբերակցության հավասարակշռմամբ: Այսպիսի պայմաններում պետությունը ձգտում է հանրային անվտանգություն ապահովելու նպատակով իրացնել իշխանությանն ուղղված իր նկրտումները՝ իր ռազմական հնարավորություններին համապատասխան:

Այն գործառնվում է **միջազգային համակարգի կազմակերպման սկզբունքի, միավորների գործառույթների և միավորների միջև ուժերի բաշխման** դետերմինացման միջոցով: Այս տիրույթներում էլ պետությունները ապահովում են ինքնիշխանություն, անվտանգություն, տնտեսության արդիականացում, քաղաքացիների պաշտպանություն, ներքին կարգի պահպանություն և այլն: Նշված սկզբունքների իրականացումն էլ պայմանավորված է պետությունների հնարավորություններով՝ ուժ(power), ռազմական հզորություն, մարդկային պոտենցիալ, տնտեսական հնարավորություններ, աշխարհագրական դիրք և հզորության այլ ցուցանիշներ:

Այս բարդ, բազմաչափ գործընթացում որոշիչը պետության կողմիցիր հնարավորությունների (ուժերի) բաշխումն է և ռացիոնալ օգտագործումը՝ ոչ միայն ուժերի հարաբերկցության պահպանման, այլև պետության իմիջի հեղինակության, բարձրացման միջոցով: Արդյունքում պետությունները գործառնում են **ինքնօգնության (self-help environment)** պայմաններում, որտեղ յուրաքանչյուր պետության գլխավոր խնդիրն է գոյատևումը՝ զարգացման, արդիականացման և նորարարացման միջոցով:

Այսպիսով, համաձայն ռեալիզմի/նեոռեալիզմի հայեցակարգի, պետությունը հասարակության քաղաքական համակարգի գերակա ինստիտուտն է, հետևաբար, հանրային անվտանգության ապահովման ամենակարևոր դերակատարը: Այդ պատճառով՝ համաձայն անվտանգության պետականակենտրոն հայեցակարգի, պետության համար արդիական է համարվում ռազմական սպառնալիքը և անվտանգության ապահովման հիմնական խնդիրն է արտաքին ոտնձգություններից իր տարածքի և ինքնիշխանության պաշտպանությունը: Ռազմական անվտանգության վրա հիմնված ավանդական հայեցակարգը գերիշխեց մինչև «սառը» պատերազմի ավարտը, որից հետո ռազմավարական իրավիճակը աշխարհում փոփոխվեց, երկու հակադիր ճամբարների հակադրությանը փոխարինելու եկան նոր սպառնալիքներ: Դրանք ունենալով էթնիկական հողի վրա ծագած ներպետական կոնֆլիկտների, ահաբեկչության և ծայրահե-

ղականության, անջատողականության, տնտեսական փլուզման և բնապահպանական աղետների, ինչպես նաև ոչ ավանդական (աղանդավորականություն, կազմակերպված հանցագործության աճ, թրաֆիքինգ) սպառնալիքների դրսևորման ձևեր՝ ընդարձակեցին հանրային անվտանգության ապահովման օրակարգը: Քանի որ ռեալիզմի/նեոռեալիզմի տիրույթներում գործառնվող կոշտ անվտանգության տեսությունը, չկարողացավ բացատրել սպառնալիքների կանխման ցանցային բնույթը, ապա, հանրային անվտանգության համակարգային ապահովման նկատառումներով, անվտանգագիտության մեջ զարգացվեց ռիսկերի կառավարման նոր մոտեցումներ:

Անվտանգության ընդարձակված հայեցակարգեր

Անվտանգության տեսության մեջ **«նոր մտածողությունը»** քննադատելով պետության՝ որպես անվտանգության գերակա դերակատարի դիտարկման անհրաժեշտությունը, փաստեց, որ պետությունները, հրապուրվելով իրենց ուժով «արհամարում են այլ և հնարավոր է առավել վտանգավոր սպառնալիքները: Սա ամբողջությամբ թուլացնում է նրանց ընդհանուր անվտանգությունը»[10]: Գլոբալացումը և դերակատարների միջև աճող փոխադարձ կախվածությունը փոխեցին սպառնալիքների և խոցելիության բնույթը: Գերակա նշանակություն ստացան այնպիսի նոր սպառնալիքներ, ինչպիսիք են բնակչության աճը և նվազումը, ռեսուրսների անբավարարությունը կամ ոչ օպտիմալ օգտագործումը, էկոլոգիական ճգնաժամերը իրենց բնապահպանական, բանական և հոգևոր բնույթով, ինչպես նաև աշխատանքի գլոբալ բաժանմանը մասնակցելու հիմնախնդիրը և այլն: Նոր մտածողությամբ անվտանգության հարցերի ավանդական հիմքերի վերանայմամբ հանդես եկավ արևմտյան հայտնի անվտանգագետ՝ Բարրի Բուզանը, իր համախոհներով: Չմերժելով անվտանգության դասական հայեցակարգը, նրանք ձևավորեցին անվտանգության ընդարձակված օրակարգով հայեցակարգ՝ առանձնացնելով սպառնալիքների հինգ (**ռազմական, քաղաքական, հանրային, տնտեսական և բնապահպանական**) հիմնական տեսակներ և թուլացնելով ռազմական անվտանգության գործոնը:

«Ընդհանուր առմամբ ռազմական անվտանգությունը կայանում է հարձակվողական և պաշտպանողական բնույթի պետության ռազմական կարողությունների և միմյանց մտադրությունների սուբյեկտիվ ընկալման երկմակարդակ համադրության մեջ: Քաղաքական անվտանգությունը վերաբերվում է պետու-

[10] Steve Smith, "The Increasing Insecurity in Security Studies: conceptualising security in the last twenty years", 2000. P. 77.

թյան, կառավարման համակարգի և գաղափարախոսության կազմակերպական կայունությանը, որոնք կառավարություններին լեգիտիմություն են հաղորդում: Տնտեսական անվտանգությունը վերաբերվում է բարեկեցության և պետական հզորության սահմանված մակարդակի պաշտպանության համար անհրաժեշտ ռեսուրսներին, ֆինանսներին և շուկաներին հասանելիությանը: Հանրային անվտանգությունը կայանում է լեզվական, մշակութային, կրոնական և ազգային ինքնության ու սովորույթների ավանդական բաղադրիչների կայունության, անխախտության մեջ՝ միաժամանակ հաշվի առնելով էվոլուցիայի ընդունելի պայմանները: Շրջակա միջավայրի ոլորտում անվտանգությունը նշանակում է տեղական և մոլորակային բիոսֆերայի (կենսոլորտ), որպես անհրաժեշտ օժանդակող համակարգի պահպանումը, որից կախված է մյուս բոլոր մարդկային գործունեությունը»[11]:

Ինչպես տեսնում ենք առաջարկված հինգ ուղղությունները սերտորեն փոխկապակցված են, նրանց համալիր փոխգործակցությունը ազդում է անվտանգության բոլոր դերակատարների՝ անհատի, հասարակության, պետության և պետական կառավարման համակարգի գործունեության վրա: Չնայած այն հանգամանքին, որ Բուզանը վերլուծում է անվատնգության բոլոր ուղղությունները, այդուամենայնիվ, նա, ինչպես և ռեալիզմի/նեոռեալիզմի կողմնակիցները, պետությունը համարում է անվտանգության ապահովման հիմնական դերակատար: Այդ պատճառով էլ նրա առաջարկած անվտանգության հասկացությունը արմատապես չի փոխում պետականակենտրոն հայեցակարգը: Համաձայն դրա՝ պետությունը անվտանգության գլխավոր դերակատար է, որովհետև. ա/ պետությունն է լուծում հենց պետության ներսում ծագած հիմնախնդիրները, միաժամանակ կարգավորելով հարաբերությունները մյուս պետությունների հետ, գործառնում է միջազգային համակարգում, բ/ պետությունն անվտանգության պրովայդեր է մյուս դերակատարների համար, գ/ պետությունը գերիշխող դերակատար է միջազգային անվտանգության համակարգում:

Պետությունը անվտանգություն է ապահովում ռազմական, քաղաքական, հանրային, տնտեսական և բնապահպանակ ոլորտներում, որոնց կարևորությունը այս կամ այն պետությունում պայմանավորված է համակարգի արդիականացման անհրաժեշտությամբ: Նմանօրինակ մոտեցմամբ էլ Բ. Բուզանի կարծիքով պայմանավորված է իր կողմից առաջարկված անվտանգության

[11] Barry Buzan. People, States and Fear. An Agenda for International Security Studies in the Post-Cold War Era, Harvester Wheatsheat, 1991, p. 19.

հայեցակարգը[12]: Անվտանգության պետականակենտրոն հայեցակարգի վերանայման մյուս ուղղությունը անվտանգության տեսության մեջ հասարակության ներառման մակարդակի հիմնախնդիրն է:

Այս նկատառումներով էլ նոր մտածողության կողմնակիցների միջև տարաձայնություններ կան հենց «հասարակություն» հասկացության վերաբերյալ: Այսպես՝ քննադատելով հասարակությունը որպես անհատների միջև ռացիոնալ դաշինք մոտեցումը, Բ. Բուզանի համախոհ Օլե Վէվերը կարծում է, որ հասարակության դիտարկումը անհատական անվտանգության միջոցով «նշանակում է, որ արդյունքում հասարակությունը վերածվում է ոչ ավելի քան նրա մասնիկների ամբողջության ...»[13]: Որպեսզի հասկանանք կոլեկտիվ անվտանգության հարցերի էությունը՝ «հասարակության անվտանգությունը առաջին հերթին պետք է հասկացվի որպես անկախ գոյություն ունեցող և իրենից առավել քան իր մասնիկների ամբողջությունը ներկայացնող սոցիումի անվտանգություն (social agent)»[14]: **«Ես»-երի ամբողջություն կազմող «Մենք»-ն է հասարակություն:** Հասարակությունը, ըստ Օ. Վէվերի, նույնպիսի անվտանգության դերակատար է, ինչպիսին պետությունն է. այն պարզապես «պետության զգացմունքային հիմքը չէ» և ոչ էլ նրան խոցելի դարձնող միավոր: Հետևաբար այն իրեն նույնականացնելով պետության հետ՝ «իմ պետությունը», նրա անվտանգության պատասխանատուն է: Միևնույն ժամանակ այն հասարակությունները, որոնք իրենց չեն նույնականացնում հանրային շահի գերակայությունը ապահովող պետությունների հետ հակասության մեջ է գտնվում պետության անվտանգության հետ, քանի որ ձգտում են հեղափոխականորեն փոխել պետական կարգը, առանց հաշվի առնելու արտաքին մարտահրավերները:[15]

Ինչ վերաբերվում է սպառնալիքների բնույթին, ապա հանրային անվտանգության մոտեցման կողմնակիցները կարծում են, որ դրանց բնորոշումը տեղի է ունենում հասարակության կողմից վերջիններիս սուբյեկտիվ ընկալմամբ կամ, ինչպես նշում է հետազոտող Տ. Տերիֆֆը, հասարակության ինքնության դեմ ուղղված սպառնալիքների ընկալման միջոցով[16]:

---

[12] Barry Buzan. People, States and Fear: An Agenda for International Security Studies in the Post-Cold War Era, Harvester Wheatsheat, 1991, p. 65

[13] Ole Waever, "Societal security: the concept", вкнигеподред. Ole Waever*et al*, eds., *Identity, Migration and the New Security Agenda in Europe* (London: Pinter Publishers, 1993, p. 18.

[14] Տես նույն տեղում էջ 16

[16] Տես նույն տեղում էջ 20-25

[16] Terri Terriff, Stuart Croft, Lucy James, Patrick M. Morgan, *Security Studies Today*. Polity Press, 1999, p.23

Անվտանգության տեսության մեջ վերլուծության մեկ այլ նոր մակարդակ է համարվում անհատը կամ անձնական անվտանգությունը: Համաձայն նշված մոտեցման՝ ամենամեծ արժեքը մարդն է և համապատասխանաբար «լուրջ սպառնալիքներ են համարվում սովը, հիվանդությունները, հաշմանդամությունը և «մնացած բոլոր հավանական սպառնալիքները՝ սնանկացումից մինչև գործազրկություն»[17]: Անձնական անվտանգության ապահովման հիմնական պրովայդեր, ինչպես և կանխատեսվում էր, պետք է լինի պետությունը: Այդուամենայնիվ պետությունը կարող է լինել ինչպես անվտանգության պրովայդեր, այնպես էլ սպառնալիքների աղբյուր անհատի համար և այդ կերպ հանդիսանա «երկդեմ Յանուս»:

Այս տեսակետը չի պաշտպանում Բ. Բուզանը, որը պնդում է, որ չնայած պետությունը կարող է և կրել որոշակի սպառնալիքներ, այդուամենայնիվ, դա անհատների համար առավելությունների և թերությունների հարց է, որոնք իրենք հիմնեցին, որպեսզի խուսափեին մարդկանց միջև անարխիկ դրությունից: Պետությունը՝ իր բոլոր թերություններով հանդերձ, համարվում է նվազագույն չարիքը մարդկանց համար: «Պարտադիր չէ ներդաշնակություն լինի անհատի անվտանգության և ազգային անվտանգության միջև: ...Պետության կողմից անհատների որոշակի անվտանգության ապահովումը ուղեկցվում է նաև սպառնալիքներով: Այդ սպառնալիքները ... անխուսափելի են»[18]: Եվ այդ սպառնալիքները Բ. Բուզանի կողմից դիտարկվում են որպես բնական ծախքեր, որոնք անհատները կրում են առավել կարևոր արժեքներ ձեռք բերելու՝ պետական մեքենային կողմից ապահովվող կարգի և օրինականության օգնությամբ:

Տվյալ փաստարկման դեմ է հանդես գալիս Կեն Բուզը, որը պետությունը չի համարում անվտանգության առանցքային օբյեկտ՝ ելնելով հետևյալ պատճառներից. նախ ոչ բոլոր պետություններն են անհանգստացած ներքին և արտաքին անվտանգության խնդիրներով: Միևնույն ժամանակ նույնիսկ այն պետությունները, որոնք զբաղված են անվտանգության խնդիրներով, ներկայացնում են միայն մեխանիզմները, բայց նրանք ոչ միշտ են իրականացնում անվտանգության ապահովման խնդիրները: Բացի դրանից պետությունները չափազանց տարբեր են իրենց բնույթով որպեսզի միանշանակ ընդունեն և իրականացնեն «անվտանգության ընդարձակված օրակարգ»-ի շրջանակնե-

---

[17] Տես նույն տեղում էջ 19

[18] Barry Buzan. People, States and Fear: An Agenda for International Security Studies in the Post-Cold War Era, Harvester Wheatsheat, 1991, p. 50

ում առաջարկված անվտանգության կառավարման չափորոշիչները: Անվտանգության հարցերի հետազոտության կենտրոնում դնելով էմանսիպացիան՝ Բուզը անհատներին հայտարարում է վերլուծության հիմնական օբյեկտ: Միայն էմանսիպացիան կարող է ապահովել իրական անվտանգություն՝ ազատելով «ժողովրդին, անհատներին և խմբերին ֆիզիկական, ինչպես նաև մարդածին սահմանափակումներից, որոնք թույլ չեն տալիս նրանց անել այն, ինչ նրանք կանեին ազատ կամքի արտահայտման պայմաններում»[19]: Համաձայնվելով առաջարկված մոտեցումների հետ՝ ավելացնենք անհատի անվտանգությանը սպառնացող տեխնածին սահմանափակումները՝ հին տեխնոլոգիաների կիրառելիություն, նոր տեխնոլոգիաների յուրացման և ձեռքբերման արգելքներ:

Անձնական անվտանգության հայեցակարգի վերաբերյալ առանձնահատուկ տեսակետ ունեն ֆեմինիստները: Կնոջը դիտարկելով որպես անվտանգության օբյեկտ՝ նրանք արմատապես փոխեցին հայեցակարգի վերաբերյալ ավանդական մոտեցումները: Վերջինս՝ համաձայն ֆեմինիստների, ըստ արժանավույն չի գնահատում գենդերային գործոնը: Գոյություն ունեն անպիսի գործոններ, որոնք ավելի մեծ սպառնալիք են ներկայացնում կանանց համար, քան տղամարդկանց: Օրինակ՝ պատերազմների զոհերը առավել չափով համարվում են կանայք և երեխաները, կանանց նկատմամբ բռնությունները լայնորեն օգտագործվում է պատերազմներում, որպես ռազմական էքսպանսիայի մեթոդներից մեկը, աշխարհում փախստականների առավել քան 80 տոկոսը համարվում են կանայք և երեխաները: Կնոջ խոցելիությունը առանձնահատուկ ձևով արտահայտվում է տնտեսական ոլորտում: Այն դեպքում, երբ կանայք համարվում են մոլորակի բնակչության կեսը, վճարվող աշխատուժի մեկ երրորդը և նրանց աշխատանքը ընդկրգում է աշխատանքային ժամերի երկու երրորդը աշխարհում, նրանք ստանում են համաշխարհային եկամտի միայն տասներորդ մասը և տիրապետում են համաշխարհային սեփականության մեկ տոկոսից քիչ կազմող մասը: Այս փաստը, ինչպես նշում են ֆեմինիստները, ցույց է տալիս, որ «պետությունը չեզոքություն չի պահպանում բոլոր անհատների համար հավասար անվտանգության ապահովման գործում» և այդ պատճառով չի համարվում անվտանգության երաշխավոր իր բոլոր քաղաքացիների համար[20]: Եվ նույնիսկ անվտանգության հայեցակարգի վերաբերյալ ընդարձակված տեսակետներ առաջարկող նոր մոտեցումները

---

[19] Steve Smith, "The Increasing Insecurity in Security Studies: conceptualisingsecurity in the last twenty years", 2000, P. 85

[20] Steve Smith, "The Increasing Insecurity in Security Studies: conceptualisingsecurity in the last twenty years", 2000, P. 94

հաշվի չեն առնում այս հանգամանքը և այդ պատճառով էլ համարվում են ոչ լիարժեք:

Քննադատության ենթարկելով ֆեմինիստական նմանատիպ մոտեցումը՝ երրորդ ալիքի փորձագետները գտան, որ այն ապակայունացնում է անվտանգության բոլոր հասկացությունները՝ փլուզելով անվտանգության ապահովման ավանդական ընկալումները: Ֆեմինիստական մոտեցումը փոխում է պետության՝ որպես չեզոք դերակատարի, ընկալումը և ավելորդ զգացմունքայնություն է հաղորդում տղամարդու և կնոջ նունայականացման հիմնախնդրին[21]: Համաձայնվելով նմանօրինակ մոտեցմանը, այնուհանդերձ, շեշտենք, որ ֆեմինիզմը՝ արմատապես փոխելով անվտանգության ապահովման ավանդական ընկալումները, կարող է պատճառ հանդիսանալ դրա վերլուծական, կանխատեսման և նորարարական գործառույթների ձևախեղմանը: Արդյունքում հանրային անվտանգության ապահովման մեխանիզմից դուրս են մղվում առավել կարևոր հիմնախնդիրները:

Հանրային անվտանգության ապահովումը որպես համակարգային երևույթ դիտարկելով՝ կարևորենք նաև միջազգային հարաբերությունների **համակարգի հումանիզացումը, այսինքն՝** վերպետական մակարդակում անվտանգության էկոլոգիայի զարգացումը: Փաստորեն հանրային անվտանգություն կարող ենք ապահովվել միջազգային անվտանգության համակարգի համատեքստում: Ասածը հիմնավորենք անվտանգագետ Կոլոջեի մոտեցմամբ. «անվտանգության քաղաքականությունը կառելի է բնորոշել որպես խմբերի և պետությունների ձգտում՝ ազդել և սահմանել (հաստատել) անվտանգության միջազգային համակարգի կամ այն կազմող մասնիկների ընդհանուր կառուցվածքը իրենց համար ցանկալի տարբերակով»[22]:

Համաձայնվելով հեղինակի հետ՝ փաստենք, որ քննարկվող մոդելներում գոյություն չունի միասնական մոտեցում անվտանգության օբյեկտի վերաբերյալ, և «արդեն առավել քան երբևէ համաձայնություն չկա այն բանում, թե ով է համարվում թշնամի»[23]: Այն դեպքում, երբ ոչ ավանդական մոտեցման կողմնակիցները առաջարկում են խորացնել հայեցակարգը՝ նրա մեջ ներառելով վերլուծության նոր մակարդակներ և ընդարձակել այն, հաշվի առնելով ոչ ռազմական գործոնները, ավանդական տեսության կոմնակիցները կարծում են,

---

[21] Տես նույն տեղում էջ 95

[22] Terri Terriff, Stuart Croft, Lucy James, Patrick M. Morgan, *Security Studies Today*, Polity Press, 1999, p.19

[23] Terri Terriff, Stuart Croft, Lucy James, Patrick M. Morgan, *Security Studies Today*, Polity Press, 1999, p.4

որ հայեցակարգի ընդլայնումը, ընդարձակումը և խորացումը կհանգեցնի հասկացության քայքայմանը, վերացմանը: Ինչպես նկատում է Դան Դոդնին, «եթե մենք սկսենք խոսել կյանքին, սեփականությանը կամ բարեկեցության սպառնացող բոլոր ուժերի և իրադարձությունների մասին ... մենք շուտով կկորցնենք հենց հասկացության իմաստը և էությունը: Բոլոր մեծ խնդիրները սպառնալիք են ազգային անվտանգությանը»[24].

Այդուամենայնիվ, ակնհայտ է, որ արդի զարգացած և զարգացող հասարակություններում առկա հիմնախնդիրները վկայում են անվտանգության հայեցակարգի արդիականացման անհրաժեշտության մասին: Այս մոտեցման շրջանակներում անհարժեշտություն է առաջանում նորովի պատասխանել մի շարք հիմնարար հարցերի. ի՞նչպես սահմանել, բնորոշել հայեցակարգը, որպեսզի չկորի նրա բնույթը և էությունը: Ի՞նչպես սահմանել այս կամ այն հարցի՝ որպես անվտանգության սպառնալիքի բնորոշման շրջանակը: Ի՞նչպես խուսափել նվազ էական գործոնների «պիտակավորումից», որոնց տրվում է անվտանգության հիմնահարցի կարգավիճակ և դրանով հանդերձ առաջանում է ողջ հայեցակարգի ամբողջականության փլուզման սպառնալիք: Յուրաքանչյուր ուղղություն առաջարկում է անվտանգության հայեցակարգի իր տարբերակը, և քանի դեռ հետազոտողները չեն հասնում համաձայնության այս հարցերում, անվտանգության տեսության արևմտյան դպրոցում քննարկումները կշարունակվեն:

Modernization Tendencies of Public Security Policy

Due to the global universal multi polar processes, the young branch of safety science is a permanent modernization, predicting all the changes which may impend the new public safety agenda. Anyway let's state, that in the scope of this new born science branch both theorists and experts of the new world didn't develop yet a unified approach, due to the development of the multi polar world regional characteristics. This young sphere of science (security studies) is now in the development process, which includes historical characteristics and patterns safety policy modernization.

---

[24] Steve Smith, "The Increasing Insecurity in Security Studies: conceptualisingsecurity in the last twenty years", 2000, P. 78